

Տարեկան գինը 10 րուբլ է և տարվանը 6 րուբլ:  
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

(Օտարաբաղադիր գիտնական ուղղակի  
Тифлис. Редакция „Ммас“)

# ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առևտրան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոհմ օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լիցոսով:

Հայտարարութիւնների համար վճարում են  
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ է սպասում թիւրքային:—Ներքին տե-  
սուծիւն: Նամակ Վարսից: Ներքին լուրեր:—  
Արտաքին տեսուծիւն: Վարսից: Թիւրքա-  
յի ծանր դրոճերը, կառավարու-  
թեան բոլոր ներքին դարձ ու նե-  
ղութիւնները, Լոնդոնի կարիւստը  
մէկից զբաղվեց Փոքր-Միսիայի բը-  
րիստոնեաների վիճակով և հայերի  
դրութեամբ: Հանելուկ չէ՞ արդեօք  
սա: Լուսին անգամից այդ հանե-  
լուկ է, բայց ով մի փոքր անգամ  
ուշադիր է եղել Միսիայի բռնած  
ընթացքին և նորա թափող ջան-  
քերին Փոքր-Միսիայում, նա եր-  
բէք չի զարմանայ:

## ԻՆՉ Է ՍՊԱՍՈՒՄ ԹԻՒՐ- ՔԻԱՅԻՆ

Միջազգային վերջին հեռագրա-  
լուրերը կայծակնալից շանթի պէս  
թնդացին քաղաքական հանգիստ  
օդի մէջ և քանի զարմանք, շան-  
թի հարուածները սկիզբ առան  
հէնց այն երկրից, որի տակ այս-  
քան ժամանակ յամառութեամբ  
արհամարհվում էր Հայաստանի  
խեղդված ձայնը: Երկու սիրահար  
խնամիների գլխով, կարծես մի  
չար աստղ անցաւ, սրտազին ս է-  
լեամի տեղ, որ կանոնաւոր կեր-  
պով ուղարկվում էր ամեն օր  
Լոնդոնից Ստամբուլ, յանկարծ  
թունալից սպառնալիքներ ստաց-  
վեցան այստեղ Փոքր-Միսիայի  
քրիստոնեաների, հայերի սովորա-  
կան դառը վիճակը, յանկարծ մի  
անսովոր և անհետեւ երկու-  
գուաւ Միսիայի համար, միմիա-  
տրութեան արիւնը և Բիկոնա-  
ֆիլդի սիրտը յանկարծ պղտորվե-

ցան, նոցա մարդասիրութեան ըզ-  
գացմունքը յանկարծ վրդովեց և,  
մի կողմ դնելով նաև Միսիայի տա-  
նի ծանր դրոճերը, կառավարու-  
թեան բոլոր ներքին դարձ ու նե-  
ղութիւնները, Լոնդոնի կարիւստը  
մէկից զբաղվեց Փոքր-Միսիայի բը-  
րիստոնեաների վիճակով և հայերի  
դրութեամբ: Հանելուկ չէ՞ արդեօք  
սա: Լուսին անգամից այդ հանե-  
լուկ է, բայց ով մի փոքր անգամ  
ուշադիր է եղել Միսիայի բռնած  
ընթացքին և նորա թափող ջան-  
քերին Փոքր-Միսիայում, նա եր-  
բէք չի զարմանայ:

Բերլինի դաշնադրութեան օրից  
մինչև հիմայ Միսիայի անդադար  
ուսումնասիրում է Փոքր-Միսիան,  
նա բնաւ չէ բաւականանում իր  
ճանաչածով, այլ նշանակելով զին-  
ւորական մարդիկ, ինժեներներ և  
ուսուցողներ Հայաստանում  
հիւպատոս և փոխ-հիւպատոսներ,  
նա խուզարկում է շարունակ եր-  
կիրը, երկաթուղիների պլաններ է  
մշակում այն տեղ, պատերազմա-  
գիտական ճիշդ բարեփոխում կազ-  
մում, շէյխերի և բեգերի տրա-  
մադրութիւնը փորձում դէպի  
Թիւրքիան և դէպի իր ոսկին, յա-  
րաբերութիւններ կապում, բարե-  
կամութիւն գցում Միսիայի  
բոլոր մահմետական ազգերի հետ  
և նոցա համակրութիւնը գրաւում

դէպի ինքը: Միսիայի և ծովեզ-  
րեայ հողեր է առնում Փոքր-Մի-  
սիայի ամերիկա և խաղաղ պեղու-  
սեփական տեղեր է պատրաստում  
այն տեղ, իսկ բոլոր աշխարհին  
հաւատացնում է թէ նա միջոց-  
ներ է փնտռում քրիստոնեաների  
վիճակը ապահովելու համար: Եթէ  
խկապէս խօսք լինէր խեղճ քրիս-  
տոնեաների վրա, միթէ Միսիայի  
չէր կարող հէնց մի քանի միլիոն  
զոհել թիւրքիայի վարչական վե-  
րանորոգութեան և ներքին վերա-  
ծնութեան գործին, երբ նա ար-  
դէն միլիարդներ է թափել նորա  
փեշերը իր ուրիշ նպատակների  
համար: Միթէ յիշուի դրամա-  
կան պակասութիւն է արգելք,  
որ Փոքր-Միսիան դառնէ և անիշ-  
խանութեան մի սոսկալի ասպա-  
րէզ: Ոչ հազար անգամ ոչ Փոքր-  
Միսիայի անիշխանութիւնը և քիւր-  
դերի արարքը առաջ են գալի  
միայն նորանից, որ Միսիայի շա-  
հերն են պահանջում այդ ամենը,  
իր գաղտնի բարեկամական յարա-  
բերութիւններով շէյխերի հետ  
Միսիայի կողմնակի կերպով խա-  
խուսում է նոցա իրանց բռնած  
ընթացքի մէջ և հայերի ձայնը  
բարձրացնելով, նա աւելի և աւելի  
իրաւունք է ստանում Եւրոպայի  
առաջ նոյնը անել Փոքր-Միսիայի  
հետ, ինչ արեց Լատինական Հեր-

ցէզ-Բոսնիայի վերաբերմամբ: Այս  
երկու դէպքումն էլ յափշտա-  
կութիւնը կատարվում է մարդասի-  
րական շարժառիթից դրդված,  
երկու դէպքումն էլ միայն քրիս-  
տոնեաների վիճակն է մէջ բերվում:  
Ուրեմն ո՞վ կարող է նախատել  
յափշտակողին...

Հայոց ազգին ինքնավարութիւն  
տալու տեղ, միթէ աւելի լաւ  
չէր լինի յիշուի եթէ ինքը Մի-  
սիայի տեղ դառնար Հնդկաստա-  
նի ամրապատ դարպասին՝ Եփ-  
րատի դաշտալայրին, զրահապատ  
նաւերով զրաւէր Փոքր-Միսիայի  
նաւահանգիստները, իր զօրքերով  
և զօրապետներով պահպանէր Լի-  
զուրը և բոլոր Փոքր-Միսիայի  
նշանաւոր պատերազմական կէ-  
տերը, որոնք գտնվում են գլխա-  
ւորապէս Հայաստանի մէջ, իր  
ոսկով ու վարձով պահէր բոլոր  
շէյխ և բեգ ցեղապետներին, ու-  
րոնք հարկաւոր եղած ժամանակը  
պատրաստ լինէին իրանց հաղանդ  
գունդերը թափել Ռուսաստանի և  
Պարսկաստանի սահմանների վրա:  
Միթէ աւելի լաւ չէր լինի Մի-  
սիայի համար եթէ Փոքր-Միսիայի  
հարստութիւնները արդիւնաբեր-  
վէին զուտ անգլիական ընկերու-  
թիւններով, լեւոնների և բլուրների  
միջով սլանային միայն անգլիա-  
կան շողեկաւորներ, գետերի և

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՇԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մշակի» 159 համարում տպված Մեղրի գիւղից  
մի անսովոր հիւանդութեան մասին տեղեկութեան  
առիթով՝ աւելորդ չէր լինելու այդ հիւանդութեան  
վարդի մի ընդհանուր գիտություն անել և մեր  
կարծիքը լայնել, հաւատալ լինելով որ այս տո-  
ղիքը, նամակագրութեան ներքո սահմանափակու-  
թեամբ, կարող էին մի մասնաւոր լայն տարածել  
այդ հիւանդութեան հոգեւոր ու բնաւորութեան  
վրա:

Թէ և և անձամբ ականատես չեմ այդ անսովոր  
հիւանդութեան, որից ընկճվածները ձեր յարգելի  
նամակագրի խօսքով մեծ մասամբ մահու զոհ են  
դառնում, բայց պ. նամակագրի սուղ, սակայն բա-  
ւական ճիշդ ու որոշ նշաններով նկարագրած հի-  
ւանդութիւնը սե խոց կամ ևս պարս (карбункулъ,  
antrax, բէռ չիպան) համարվում հատուտ կար-  
ծիք կարելի է ունենալ, մանաւանդ որ մի  
այսպէս հատուտ կարծիք ունենալու ապացոյցը  
կարելի է ունենալ իմ բժշկական գործունէութեան

սահմանում վերջին ժամանակները նկատված երե-  
ւոյթից և բժշկական պարբերական թերթերում հա-  
ղորդված տեղեկութիւնից:

Ներկայ դէպքում ուշադրութեան արժանի է  
այն երևոյթը՝ որ այդ հիւանդութիւնը ձեր նամա-  
կագրի նկարագրած նշանների նոյնանմանութեամբ,  
վերջին ժամանակները՝ նկատվում է Կովկասի  
զանազան տեղերում արտաքին կարգի աստուկու-  
թեամբ և տարածութեամբ: Նոյնը նկատվում է և  
Ռուսաստանի ներքին հասանգներում:

Այս հիւանդութիւնը իր տարրական ձևով հա-  
տարակ, չքաւորութիւնից ընկճված և մարմնի մաք-  
րութիւնը անուշադիր թողած ժողովրդեան մասի  
մէջ անհատականաբար տարածված երևոյթ է և  
յայտնի է պալար (чирей, frunculus, չիպան) ա-  
նունով, բայց երբ այդ ցարը ներքին և արտաքին պատ-  
ճառներով խանգարում է իր սովորական, կենսա-  
կան անվտանգ ընթացքը, կերպարանափոխվում  
է և կոչվում է սե խոց կամ սե պալար (кар-  
бункулъ, antrax, բէռ չիպան): Որքան որ այս հի-  
ւանդութիւնը՝ մարմնի մակերեսով մի սահմանա-  
ւոր կէտից ցաւ լինելով, ինքն ըստ ինքեան կենսի  
համար անվտանգ է, մանաւանդ եթէ խոցի երե-  
ւալուց անմիջապէս յետոյ նպատակայարար օդ-  
նութիւն լինի, այնքան վտանգաւոր է, երբ սահ-  
մանաւոր լինելով՝ կերպարանափոխվում է,  
սեւանում է, մանաւանդ երբ նորա մեծած արմատի  
գեղալով տարրեր թափանցում են երանքի մէջ և  
թունաւորում են մարդու գործարանակալով:  
Ինչպէս վերև յիշեցիք՝ թէ և այս հիւանդութիւնը

անհատական դէպքերով ընդհանրական երևոյթ է  
հասարակ ժողովրդեան մէջ, բայց զրա տարափո-  
խիկ (эпидемический) երևալը գիտութեան մէջ ըն-  
դունված իրողութիւն է. անտ այս դէպքում այդ  
հիւանդութիւնը զխաւորապէս անմեղ պալարից  
կերպարանափոխվում է սե խոց և շատերին գե-  
րեցման է հասցնում: Գաղափար տեղեկութեամբ դար-  
նան և աշխատ ժամանակ համարեալ թէ միշտ պա-  
տահում է ընդհանրութեամբ այդ հիւանդութիւնը,  
բայց որովհետեւ պատահում է այդ հասարակ ժո-  
ղովրդեան մէջ, մանաւանդ՝ որ շատ անգամ  
առանց վտանգի անցնում է, այդ պատճառով հա-  
զի թէ այդ ցարի վրա պաշտօնապէս հաղորդվում  
է. բայց այս նոյն ինքն ժողովրդը պալարի երե-  
ւալը արեան գրգռվելուց առաջ բերելով առող-  
ջութեան համար լաւ նշան է համարում:

Տարբաբաղադար այս տարի այդ հիւանդութեան  
կանոնաւոր ընթացքը խտորով էր իր ընդհանուր  
չափից: Վեց տարվայ բժշկական գործունէու-  
թեան ընթացքում հասարակ, գեղջկական ժողո-  
վրդի մէջ նկատած չէի, այդ հիւանդութիւնը  
այնքան խտութեամբ, կերպարանափոխութեամբ  
և տարածութեամբ, ինչպէս այս տարի ամառ-  
վայ վերջերը: Մինչև անգամ Լէնկորանի  
գաւառում այդ խոցով անտառներից մի քա-  
նիսի մահը հասարակութեան ուշադրութեան լար-  
ված վիճակի պատճառով, բաւականին վտանգ  
չարժեց: Ումանք կործան էին թէ սա Ռէշտի  
մահաւարժամբ (pestes, պէստ) ժառանգ է, ումանք  
ևս համարում էին սի բիբրակա խոց (pustula

maligna, сибирская язва), բայց բոլորը համա-  
միտ էին այն կարծիքին, որ սա վերին աստիճանի  
վարակիչ ու վտանգաւոր ախտ է:

Բաւական էր փոքր ինչ փորձառութիւն  
ունենալ և նկատել երեւած ցարի ծագումը,  
ընթացքը և բնաւորութիւնը, որ հաստատապէս  
կարելի լինէր ապացուցելով՝ որ այդ հիւանդու-  
թիւնը, ոչ Ռէշտի ժամանակ ժառանգն է և ոչ  
սիբիրական խոցի թոյն, այլ հասարակ, բայց կեր-  
պարանափոխված պալարի հիւանդութիւն, որ  
այս անգամ տեղական կլիմայի և տարվայ առանձին  
բայց մեղ անյայտ յատկութեանց միաբան ներ-  
գործութեամբ մի անսովոր խտութիւն և տարա-  
ծութիւն էր ստացած: Հիւանդանոցիս յաճախող  
բազմաթիւ երթիկի հիւանդներից չատերեւ ախտա-  
ւորված էին այդ ցարի տարրական ձևով, որան-  
ցից տառիկ չափը սե պալար ունէին, բարեբաղա-  
ւոր արանցից ոչ մինի կենսալը վտանգ չունէցաւ:  
Մանրամասն հարց ու փորձ անելով ես կարողա-  
ցայ որոշել մի իրողութիւն, որ այդ հիւանդներից  
բոլորը սկզբում մարմնի վրա նորածին, մանրիկ  
պալարներ ունենալով՝ ջրում լողալը օգտաւէտ  
կարծելով լողացել էին մի քանի անգամ և լողա-  
նալուց անմիջապէս յետոյ ստացել են սե պալար:  
Իմ նկատած երևոյթներից և իրողութիւնից,  
նոյնպէս հաղորդված տեղեկութիւնից՝ համոզված,  
որ Մեղրի գիւղում երեւած հիւանդութիւնը՝ ներկայ  
ժամանակ ուրիշ տեղ գտնված հիւանդութեան հետ  
մի էութիւն ու մի պատճառ ունի, վտանգանում  
եմ հաստատելով՝ որ այդ հիւանդութիւնը՝ սրբան



ճակների վրա լողային լոկ անդ-  
լիական նաւակներ և բոլոր տա-  
րածութեան վրա լվէր միայն  
անգլիական հնչիւն և անգլիական  
բարբառ: Եթէ այդ ամենը կա-  
րելի է անել հեռու Հնդկաստա-  
նում և Աֆրիկայի երկիրներում,  
ինչո՞ւ չէ կարելի այդ անել աւելի  
մօտ երկրում: Միթէ աւելի  
լաւ չէր լինի այդ ամենը, քան  
թէ այն ժամանակ, երբ Լըզրու-  
մը լինէր ինքնավար Հայաստանի  
մայրաքաղաքը, բրտնաջան Հայաս-  
տանը մի պատուար հանդիսանար  
Անգլիայի արդիւնաբերական հարս-  
տահարութեան դէմ: Հայոց բնակ-  
վող երկիրները մի աղատ ճանա-  
պարհ բաց անէր դէպի Պարսկաս-  
տան և Հնդկաստան, իսկ Ռու-  
սաստանի և բոլոր Լըզրուայի ար-  
դիւնաբերութեան համար խա-  
ղաղասէր և կուտուրական հայոց  
ազգը հաւատարիմ միջնորդ հան-  
դիսանար լուսաւոր ազգերի գի-  
տութիւնը հաւատարապէս ընդու-  
նելու և հասարակապէս սփռելու:  
Բայց Անգլիան իր օգուտը  
լաւ էր հասկանում, վասն որոյ  
միայն յարմար դէպքի էր սպա-  
սում Փոքր-Ասիան գրաւելու հա-  
մար, ինչպէս ցոյց կը տանք վաղ-  
վայ յօդուածում:

Գր. Նիկողոսեան

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

5 հոկտեմբեր

Հանգամանքները քննելով ինձ Ղարս: Այստեղ  
ամեն քունջ ու պոռնակից մարդիկ են թափվում  
և աշխատում են անպատճառ որը դուքան առնել,  
որը մի դատարկ դեմքին: Մէջը միւսին հետեւելով  
այնքան թափվելով են թափվում են որ եղած օ-

ւա տարածված լինի, ոչ վտանգաւոր է և ոչ վա-  
րակիող, եթէ հիւանդացողները՝ անուշադիր չը  
թողնելով իրանց ցաւը սկզբում, իսկոյն բժշկական  
օգնութեան դիմեն: Վտանգը սկսվում է այն  
կէտից, երբ սառեցնելով կամ ուրիշ պատճառով  
մարմնու վրա երևած պաշարները մինը սկսվում  
է սևանալ, գեշալոյծ լինել և վարակել ամբողջ  
մարմինը: Որովհետև այս հիւանդութեան հիմքը  
մեր մաշկի (Кожа) մէջ գետնված ճարպի և  
քրոնքի պարկերի (железы) բորբոքումն (воспо-  
лнение) է և այդ բորբոքման պատճառը նոյն պար-  
կերի փակվելուցն է, ուրեմն այդ հիւանդութիւ-  
նից ազատ մնալու ամենալաւ ու նպատակա-  
յարմար միջոցը ամբմի մաքուր պահելն է ստէպ  
ստէպ բաղնիս յաճախելով: Ո՞վ չը գիտէ մեր  
գիւղացիների անմարուր կենցաղավարութիւնը.  
ում անձնաթի է, որ չինականի համար բաղնիս  
գնալով մի անօրինակ երեւոյթ է: Այս պայմանների  
մէջ ապրող գիւղացու և հասարակ ժողովրդի հա-  
մար զարմանալի չը պէտք է լինի, որ մարմնի  
մաշկերեւոյթի վրա զանազան բնաւորութեամբ և տե-  
սակներով ախտեր են երևում, որոց թւիցն է և  
պաշարի հիւանդութիւնը, որ զլուսաւորապէս նկատ-  
վում է այդ դասի մէջ:

Մենք ասացինք որ մարմնի մաշկը (Кожа) մա-  
քուր պահելով և ինամատար լինելով կարելի է  
ազատ մնալ պաշարից: Բայց եթէ հիւանդու-  
թիւնը արդէն սկսած է, պէտք է աշխատել զսպել  
գարբացած տեղերը քրոնքուց, որ առաւել չը  
կրգովն նորածին պաշարները, և դնել նրանց վրա

գուռն էլ կորցրին, աշխատանքն էլ. 10 կօպէկի  
բանը բարձրացրին մինչև 10 շալի: Իմ տեսած այն  
ապական խորհիւնքը, օճապոտ փողոցները,  
կամայ կամայ կերպարանափոխվում են և քաղաքի  
ձև ստանում: Ժողովրդի վարուց բարուց և բնա-  
ւորութեանց մասին առ այժմ ոչինչ որոշ չեմ կա-  
րող ասել, որովհետև, ինչպէս վերին ասացի աշ-  
խարհի շատ հեռաւոր քննելից զանազան տեսակ  
մարդիկ կան, որոնք զանազան տեսակ սովորու-  
թեանց ու բնաւորութեանց տէր են: Բայց ինչ  
վերաբերում է Ալէքսանդրապօլի չափի ու ռե-  
ն երէն, շատ զգուշելի են. կարծես Աստուած  
ստեղծել է դրանց միայն կռելու և աւազակու-  
թիւն անելու համար: Եւ կարծում եմ որ Ալէք-  
սանդրապօլից չափի ու ռեն երէն տեղափոխվե-  
լով այստեղ, Ղարսն էլ Ալէքսանդրապօլի օրին  
հասցնեն: Այստեղի դպրոցները ամենամանկութեան  
դրութեան մէջ են, աշակերտք և աշակերտուհիք  
դեռ փողոցներում թափառում են. վարժապետք և  
վարժուհիք ամական օճիկներու առնում և անօ-  
գուտ թափառում: Գաղտնիքի բացման յոյսը մնա-  
ցել է Վեհափառ հօր հայրական խնամքին, դեռ  
յոյսերս բոլորովին չենք կտրել: Կը գրեմ ձեզ այս  
մասին: Ղարսում այժմ կան երեք քահանայ,  
որոնցից երկուքը (տէր-Ջորաբաբէ և տէր-Ղու-  
կաս) ամբողջ դպրոցները աշակերտներով և վար-  
ժապետներով չեն փոխի իրանց մի կօպէկ աշա-  
համարի: Եւստի իրանց ծովները շատացնե-  
լու գործով են զբաղված, նրանց համար ամենին  
հոգ չէ թէ դպրոցները յաւիտեան փակված կը  
մնան: Տէր Ղ. գիշեր ցերեկ չլքում է թաղերում,  
գտնում է օտարականներին և խնդրում իրան  
ծուխ լինեն, մանաւանդ տէր հայրը աշխատում է  
աստիճանաւորներով շատացնել իր ծխը: Գիւտ այս  
ոչինչ, տէր հայրը նշխարք բաժանելը դարձրել է  
իրա համար սովորական արհեստ: Մի րոպէ քա-  
թու նշխարք գրպանից պակաս չէ լինում, հէնց որ  
մի պղպան կօճակներով, կամ արծաթեայ քանարով  
աղա է տեսնում, իսկոյն նշխարքը Միքի հա-  
նում ու թաւաղա է անում: Այս, տէր հայրը մի  
քանի օրուան քարթու նշխարով էլ պատարագ է  
արել: Եթէ մի աղքատ օտարական լնդրէ տէր  
Ղ. ից իր մտելով թաղելու առանց գրչի, 15  
տարի պառկած կը թողնի: Փող տուր տէր հօրը  
և ինչ ուզում ես անել տուր: Տէր հայրը պատա-  
րագ անելիս ինքը անձամբ դնում է և պատարագի  
տիրոջն նշխարի ալիւր բերում և մի և նոյն ժա-  
մանակ այնքան բերում որ մի քանի գրվանքայ  
աղլուխը ցնում իր տունն է տանում: Այսպէս  
է վարվում և բաժակացու գինու հետ: Մինչև  
պատարագի տիրոջն մոտ չառնի սաղմոս չի քաղի:  
Այսպէս է վարվում եկեղեցական մօմերի հետ ևս:  
արծաթեայ խաչեր էլ շատ է սիրում:

Առ այժմ հոգեւոր միջնորդութիւններից շատ  
զուրկ են գաղթականների անձար աղքատները,  
որոնց օրինակատարութեանց վրա ուշք չեն դարձ-  
նում Ղարսի քահանայները, որովհետև նրանք չեն  
կարողանում կանխիկ վճարել քահանայապետական  
վճարը. այդ պատճառով շատերը առանց ճաշակ-  
վելու և առանց մկրտութեան մեռնում են: Այս  
մի և նոյն վիճակին ենթարկված են նաև տեղացի  
աղքատ բոջանները, որ 50 տանից աւելի կը լինեն:

Փափկեցնող սպեղանի: Եթէ նշխարվում է ստա-  
մարի խանդավորները, որ յաճախ է պատահում  
պաշարի ժամանակ, կէտք է ընդունել մի որ և  
իցէ լուծողական, կամ իւղ (расторбное масло)  
կամ անվիակական աղ, կամ լուծողական չայ:  
Պէտք է աշխատել որ պաշարը հանի, փափկել,  
բերանը բացել բնական կարգով և նրա մէջ դրա-  
ցած թաղարթ ազատ դուրս գալով, դուրս գալ պա-  
շարի փառն արմատը, որ հիւանդութեան գլխա-  
ւոր պատճառն էր: Երբ որ պաշարը ազատվի  
այս արմատից, կարելի է համարել որ հիւանդու-  
թիւնը յաջող վերջացել է:

Բայց իցէ փափկացող սպեղանին անօգուտ է  
մնում և որպարը կակղելու փոխանակ սկսում է  
մեծանալ, ծաւալել, սեանալ կամ կեղտոտ կեր-  
պարանք ստանալով դիակնալ, փոռ, փափկա-  
ւոր չէ մի րոպէ ժամանակ ևս կորցնել, այլ ԸՉ-  
տուպել մեծանալով գտնվում բժշկի օգնութեան դի-  
մը: Այսպէս անհոգութիւնը, դանդաղութիւնը  
մեծ փափկելու տուրի կը դառնայ, իսկ միմիայն Աս-  
տուծոյ վրա յոյս դնելը, Աստուած ողորմած է ա-  
սելով նորա բարութեան ու ողորմութեան դէմ  
հայհոյութիւն կը համարվի: Աստուած ողորմած է  
նրանով, որ սովել է մեզ մի ամենազօր գէնը իմա-  
ցականութեան անուշով ամենախիղի զգաղութե-  
թեան և չարութեան դէմ մաքառելու հա-  
մար. այս գէնը մանաւանդ պիտի գործադրուի  
կըր չար դիւպանները սպառնում են Աստուծոյ  
ամենամեծ նորաց, որ առողջութիւն անուշով  
նա պարգեւ է իր ստեղծած մարդուն:

—Հոգոյն հանգուցելոյն... Նոյնպէս շատ արժան  
է մեր Ղարսի քահանայների մօտ: Տէր Ղ. չն օրա-  
կան էլի մի քանի կօպէկ տուն կը տանի հոգոց  
և պահպանիլ ասելով:—Ի՞նչ անենք. այս տեսակ  
քահանայների թիւը պակասացնողը պէտք է լինեն  
Ղարսի դպրոցները, որոց գոհները այժմ փակ են  
և տէր Ղ. չն էլ ուրախ:

Այստեղ հետաքրքիր անցքեր շատ են պատա-  
հում, բայց լրագրելուս ոչինչ չեն գրում: Շատ  
քիչ են գրում այստեղից: Ես իրաւ սրտով ուզում  
եմ ամեն բան գրել «Մշակին», բայց քանի որ նրա  
գարհուրելի զամբիւղը միտու է գալիս, գրիչը վեր  
եմ դնում: Բայց ես կարծում եմ որ «Մշակին»  
խմբագիրը մի առիթ բան դամբելով չի գցի, որից  
կարելի էր օգուտ քաղել: Չէ ես պէտք է սիրտ  
անեմ ու մի լաւ յօդուած գրեմ «Մշակին», դու  
ու ջանադրամ թէ մի սուր պատասխան էլ իմ  
ճակատիս կը կպցնի: Բայց ինչ անես որ «Մշակին»  
պատասխանները շատ դժարաւալի և հետաքրքիր  
են լինում: Ուրիշ տեղեր չը գիտեմ, այստեղ ամե-  
նից առաջ պատասխաններն են կարգում:

\*\*\*

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՂԱՐՍԻՑ գրում են «Голосъ» լրագրին որ թէ  
Ղարսի հայոց դպրոցները բացվեցան կաթողիկոսի  
հրամանով, բայց նորերումս կրկին փակվեցան գե-  
ներալ Ֆրանկլինի հրամանով: Թղթակիցը յոյս ու-  
նի որ շուտով կը վճռվեն բոլոր տարակուսու-  
թիւնները:

Ստացանք իշխան Մ. Բէհրութեանցի հրատա-  
րակվող «Հայկական թատրոն» վերնագրով  
ժողովածուի 7-րորդ տետրակը, որի մէջ տպված  
է «Տիկինը նրան սպասում է» կատակերգութիւն  
մէկ արարուածով, թարգմ. Յ. Մէլ. և նոյնպէս  
թատրոնատէրի «Թատրոնական ժամանակագրու-  
թիւն»:

ԱՍԱՆՑԻՍԻՑԻՑ մեզ գրում են հոկտեմբերի 21-  
ից. «Միանց մի քանի օր առաջ կովկասեան ու-  
սումնարանական չլիանի պ. հոգաբարձուի առա-  
ջարկութեամբ հաւաքվեցան մեր քաղաքի առաջա-  
ւոր անձնակցներից մի քանիքը. Ս. ժողովում ա-  
ռաջարկվեցաւ եկեղեցու գաւթում գտնված ժողո-  
ւրդական ուսումնարանը փոխադրել մի աւելի  
յարմարաւոր տեղ, որովհետև յիշեալ ուսումնարա-  
նի տեղի գրութիւնը համապատասխան չէ առող-  
ջապահական կանոններին: Մեր քաղաքացիները  
դարձեալ մի տարի ժամանակամիջոց ինդրեցին  
փոխադրութեան համար և խոստացան հարկաւոր  
վերանորոգութիւններն անել յիշեալ ուսումնարանի  
չինութեան մէջ»:

Մեծապատիւ խմբագիր, ուղարկելով ներկայ  
համառօտ զիտողութիւնը որպէս պատասխան ձեր  
պատուելի թղթակցի առաջարկութեան, կը յուսամ,  
որ սոյն տողերին ձեր պատական լրագրի էջերի  
մէջ տեղի տալու պատիւը չնորհելու էք ինձ:  
Նոյնպէս կը յուսամ, որ տեղական միւս լրագրի-  
ներն էլ զանա առնելու չեն սոյն տողերի արտա-  
սպագրութիւնը իրանց թերթիկի մէջ, քանի որ  
այդ համեստ բարեացակամութեան թելադրած  
մտքերը բերած են հասարակաց կարօտութեանը  
առատրելու:

Հարկաւոր եմ համարում աւելացնել և հետե-  
ւաւոր: Բժ. պ. Դանիէլ-Բէգեանցի նկատած օտա-  
ւորի հիւանդական երևոյթը Երևանի նահանգում,  
որի մասին նա հաղորդած էր «Тифл. Вѣст.»-ում  
Не чума-ли въ Эриванской губерніи» վերագրեալ  
յօդուածով, —մեր անձնական նկատողութիւննե-  
րից երբեք փակել համոզմամբ, ոչ այլ ինչ է եթէ  
ոչ կերպարանափոխված և բարդված պաշար նոյն-  
պէս տարափոխիկ (эпидемически) երևալու ժա-  
մանակ, ճանաչելի գոլորշիների ներգործութեամբ  
(миазма): Այդ յօդուածի մասին բարձրացած հակա-  
ճառութիւնը տեղի չէր ունենայ, եթէ պաշարի աշ-  
խարհական ձևերը այնպէս տարափոխիկ տա-  
րածման ժամանակ հաստատ հնտութեան, և  
քննութեան առարկայ լինէին: Այս հիւանդութեան  
տարածման ժամանակ վարունքը (bubo, хиярджибъ)  
տեղական ընթացքով այնքան օտարօրի երևոյթ  
է, որ հեղտութեամբ կարող էր մոլորութեան կամ  
տարակուսութեան առիթ լինել: Բայց չը նայելով

Լուսմ եւր որ ԹԻՖԼԻՍԻՍԻ թուրքերէն հրա-  
տարակիող «Զիլա» լրագրի կովկասի մահմետական-  
ներին կարգացած հրաւերը մեծ ընդունելութիւն է  
գտել. ամեն կողմից չնորհակալութեան և համա-  
կրութեան ուղերձներ են ստացվում «Զիլայի» իրմ-  
բազրատան նորա խորհրդի համար կազմել Թիֆլի-  
սում մի կենտրոնական ընկերութիւն կովկասի  
մուսուլմանների մէջ լուսաւորութիւն տարածելու  
նպատակով: Ամբողջ սրտից աջողութիւն ենք ցան-  
կանում մեր մուսուլման երկրակիցներին այդ վեհմ  
և կարեւոր գործին:

Լուսմ եւր, որ ՆՈՒՍԻՍԻ Նիժ և Վարդաշէն  
գիւղերի մէջ լուսաւորացաւան ուսուցիչը մտա-  
դիր են իրանց ուսուցիչների թւում թուրք մօլա  
ևս հրաւիրել ինչպէս կրօնուսոյց չըլակայ գիւղերի  
այն մուսուլման երեխաների համար, որոնք սկսել  
են յաճախել ուստիացիների բացած հայոց ուսում  
նարանը: Որովհետև ուստիացիք իրանք ևս ազգով  
ու ինքուով հայերից օտար աղք են, բայց լուսաւոր-  
չապաւան, ուրեմն թուրքերը աւելի մեծ վտանգու-  
թիւն կարող են ունենալ ընկերակից լինել ու-  
ստիացի երեխաների հետ հայոց ուսումնարանի  
նստարանների վրա հայոց և ուսուցիչ ինքու սովո-  
րելու համար:

ՆՈՒՍԻՍԻՑ գրում են, որ այդ գաւառի մի հին  
եկեղեցու վրա Գէօնիզի անտառում մի տեսակ  
տառեր են գտել, որ կարծում են թէ Մեսրոպի  
հնարած, բայց վաղուց արդէն կորած աղեւտա-  
կան տառերն են: Կովկասի հին աղուաններից  
այժմ միայն ուստիացիք են մնացել, պահելով ի-  
րանց լեզուն և կրօնը, ուրեմն այդ գիւղը բացի  
բնագիտական նշանակութիւնից, կունենայ և գործ-  
նական վարդաշէնի և Նիժի ուստիացիների հա-  
մար:

Կիրակի, հոկտեմբերի 28-ին հայ թատրոնատէրների  
խումբը պ. Յ. Ստեփաննանցի կառավարու-  
թեամբ Արծրուտու թատրոնում ներկայացրեց  
«Մէլիքիմ համ Օսման փաշա», գրամա 4 արարուա-  
ծներով, փոխ. պ. Փարսադանեանի: Թէ պիտեայի  
փոխադրութեան և թէ թատրոնատէրների խաղի  
մասին մենք ոչինչ չենք ասի, որովհետև երկուսն  
էլ ստոր են ամենայն կրիտիկայից: Պ. պ. թատ-  
րոնատէրները բերել ցրկիկ ասպարէզ էին դարձրել:  
Թատրոնատէրների հետ մասնակցում էին երկու օրի-  
որդներ՝ Ալեքէն և Փարանձէմ, որոնք անձնակ խա-  
ղից երևաց, որ դրանք բեմական ընդունակութիւն  
ունեն և կարող են լաւ խաղալ, եթէ առաջնորդ-  
վեն բեմին ծանօթ անձնակցներից:

Մեր աշխատակից պ. Յ. Տէր-Գրիգորեանի «Վէ-  
պեր» վերնագրով գրեւոր օրերումս դուրս կը գալ  
մամուլի տակից և կուղարկվի այդ գրեւորի բաժա-  
նորդներին: Գրեւորը բաղկացած կը լինի մօտ 200  
երևոյթից: Գրեւորի մէջ կը մտնեն հետեւեալ  
վէպերը, որոնք զանազան ժամանակներ տպված  
են եղել «Մշակին» մէջ. «Նյնո», «Փեղիկ բազար»,  
«Մարդասպան», «Որդու հարսանիքը», «Մարիա»,  
«Մարդի Ողան», «Մի թերթ իմ յիշողութիւններից»:

այս օտարութեան սա առաւել ստէպ երևոյթ է  
քան թէ մենք կարող էինք կարծել: Չը նայելով  
այս հանգամանքի վրա, դժուար թէ մենք կարող  
էինք այդ վարունքները (бывшие) սկզբնական հի-  
ւանդութեան երևոյթ համարել կամ ժամանաւոր  
մի հասարակ ձև կարծել: Մեր նկատողութիւն-  
ները ներում են մեզ հաստատել, որ ներկայ հա-  
գամանքներում ևս վարունքների ուսուցիչը համա-  
կրական (симптоматический), բայց վերականգն ախտի  
(Венерическая болѣзнь) հետ ոչինչ յարաբերու-  
թիւն չունեցող երևոյթ են:

Բժշկական տեսակէտից շատ ցանկալի էր որ  
պաշարի տարափոխիկ տարածութիւնը (эпидеми-  
ческая появленіа), ինչպէս ներկայումս Մեղրի  
գիւղումն է, մանրամասն հետազոտութեան և  
հմուտ մշակութեան առարկայ լինէր: Տարբաբա-  
ղաբար մինչև այժմ պաշարական տեղակութիւն  
չը կայ, գուցէ թէ եղած է, բայց մեզ չը հասաւ:  
Միայն այսքան կարող ենք ասել, որ այս հարցի  
ամենակողմանի բացատրութիւնը վերին աստիճա-  
նի ուղարկութեան արժանի կարգի է առողջապա-  
հական տեսակէտից, աւելացնելով սորա վրա, որ  
պարբերական թերթներում հաղորդված տեղեկու-  
թիւնները մեծ ծառայութիւն արած կը լինեն այս  
պարագաներում: Գորի գաւառում պատահած հի-  
ւանդութեան պատմութիւնը թող մեծ խրատ լինի  
մեզ համար:

Սալիան. Բժշկ. Արամիանց



Գրքային զինը բաժանորդների համար նշանակված է 40 Կ. իսկ հրատարակվող յետոյ գնորդների համար 60 Կ. կը լինի: Գրքային 900 բաժանորդ ունի:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են հետևեալը հոկտ. 22-ից: «Երեկեան օրը, Ամբրոսիոս Վ. Ռուբինեան՝ վերադառնալով Ս. Պետերբուրգից պատահաբար ժամանակ տուաւ իր հրատարական ուղևորը Մոսկվայի հայ ժողովրդաց, մատուցանելով իր շնորհակալութիւնը այն նուիրատուութիւնների մասին որ նրանք արին, խոստանալով դարձեալ երբ և իցէ ցոյց կուանէ նրանց: Երեկ նուիրատուութիւնների համը բերանուան է մնացել: Բայց այդ ոչինչ, ահա զարմանալին և զարհուրելին նրա քարոզի մէջ, որ սարսափեցրուց բոլոր ժողովրդին, մինչև անգամ մանուկներին: Հ. Ամբրոսիոս վարդապետը իր խօսքի ծայրը կորուսանելով հաստացն էլ տին՝ որ ասաց, թէ վաճառականների սուտ խօսելը և խաբարեցողութիւն անելը առևտուրի ժամանակ ներքին է՝ եթէ միայն այդ ստախոսութիւնով կարելի պիտի լինի երկու կողմէի աւելի աշխատել, և այդ աւելի աշխատած փողը մէկ մասը ազգի օգտին նուիրել: Ուրեմն սուրբ հօր կարծիքով կարելի է մարդ ևս կողոպտել, չեմ ասում սպանել, միայն կողոպտած փողի մի մասը ազգի օգտին նուիրել: Ահա ձեզ նոր հայեցողութիւն: Հ. Ամբրոսիոս վարդապետի քարոզի միւս մաստի անճոռնի կէտերի վրա խօսել աւելորդ եմ համարում՝ վերևում յիշուած կէտից յետոյ: Մինչև այժմ մենք զանգատուած էինք թէ չունենք քարոզիչ քահանաներ, վարդապետներ և այլն: Այժմ, փառք Աստուծոյ երեցան քարոզիչներ, բայց քարոզիչ լինել էր չունենալ և չը տեսնել այդպիսի քարոզիչներ, որք հայեցողութիւն են մտցնում մեր մէջ: Ահա արդարութեամբ կարելի է ասել թէ նոր քարոզիչները փոխանակ միմիարեւու մեզ զգուցանում են:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻՍԻՍԻ ԹՂՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄՈՒՇԻՑ  
ՕԳՈՍ. 9-ԻՑ

Ներկայիս ուրիշ ժամանակներէ աւելի օտար ափանց վրա թափառող Հայուն աչք Հայաստանի վրա տնկուած լինելուն պատճառաւ հարկ կը համարիմ Բագրեանդայ Մանաւահանց և Խոստումնանց նահանգաց վրա համառօտ տեղեկութիւն մը տալ պատուական օրագրողը ընթերցողաց, թողով որ Դըպրոցասիրաց—Արեւելեան հայրենասիրութիւնը հրատարակէ վիճակացս վրայը իրեն ղեկուած ընդարձակ տեղեկագիրն:

Բագրեանդայ դաշտը Բաքուի Արեւելեան հարաւային ծայրէն ՏՀէրի լեռանց մէջէն կը սկսի արևմտեան կողմն ունենալով Խալիզ, ուր հինաւուրց եկեղեցեաց աւերակներ կը նշմարին և որ Սուլայի Օսման աղա անուն Գուրգ Սէրիթիին տիրապետութեան ներքէն է: Սոյն դաշտը, որ 12—15 ժամ երկայնութիւն ունի գէպ յԱրեւել, և 3—4 ժամ լայնութիւն, բոլորովին Հայկական գիւղօրէիւք շրջապատեալ և ծածկեալ էր: Սակայն 1829ի Պատկեիչի ժամանակուան աղետաբեր զաղթականութեան ժամանակ ամառի դարձած և Քրդերէն տիրապետեալ է: Այժմ միայն 10—12 գիւղք կան հայաբնակ սոյն ընդարձակ և բարեբեր դաշտին մէջ, 500 տուն Հայ բնակիչ, որք Քրդաց բռնաբարութեան և տրդիտութեան լծերու տակ ճնշուած են, վերջին պատերազմը վրա գալով, երկու թըշնամի բանակաց շահատակութեանց ասպարէզ դառնալէն յետոյ, կրկնակի զաղթականութեամբ ժողովրդեան վերջին շունչն և կարծես կորուած է: Արհեստք և առևտուր և երկրագործութիւն Հայոց ձեռքն են թէպէտ, բայց Քրդաց և Թըքաց, որք սակաւաթիւ են յետինքս, երկաթանման ձեռք կարծրապէս ծանրացած է այս թշուառ ժողովրդեան վրայ: Չեմ հաւատար որ գտնուի ամբողջ Հայաստանի մէջ երկիր մը որ այսչափ յետնեալ լինի և

Ծանր ցաւոց և բռնութեանց ենթակայ, և պաշտօնական հոկոգութեան գուրգ, սակայն մը խիթարական երեւոյթ մ'է՝ այս դժբաղդ ժողովրդեան ուսման և դաստիարակութեան ցոյց տուած ծարաւը, յագեցնող պէտք է. յուսալի է որ Դպրոցասիրաց—Արեւելեան ընկերութիւնն ազգին օժանդակութեամբ իւր գործերը պիտի ընդլայնէ այս յուսով դաշտին մէջ, ուր հունձք բազումք և մշակք ոչ երբէք: Դաշտի գլխաւոր տեղին է Վաղարշապետ կամ Թօփրաք—գալէ, 400 բնակչօք, որոց 120ը Հայ են և մնացածները Քուրդ. կան նաև 20—30 տան Հայի ևս գաղթական, որք հետզհետէ իրենց հայրենի կտուրը դռնալու վրայ են: Գաղաքական կառավարութիւնն է Գայմազադութիւն, Միւթէսարըք Պայագլու, և Վիլայէթ Կարին: Ամբողջ դաշտի ժողովրդեան վիճակէն բացառութիւն մը չեն կազմեր գիւղաքաղաքիս Հայ բնակիչք, որ երբեմն 15,000 տուն կը հաշէին, և ուրոց տանց աւերակներն և մեծագործ, բայց աւերեալ բլրակաբերդը քաղցրիկ և միանգամայն սրտատանջ յիշատակներ կը զարթոցանեն ի հայրենասէր ուղևորն. Վաղարշապետի և Դարաքիլիսի շրջակայ Հայ գիւղօրէիւք թէպէտ Իւլէքիլիսի վանահայր և Վաղարշապետի և Պայագլուի բարեջան Առաջնորդ Գերապատիւ Յովհաննէս վարդապետի աշխատութեամբ և յորդորանօք մէկ մէկ նախակրթարաններ ունէին, սակայն պատերազմ զանոնք վեր ի վայր չըջած և մինչև իսկ հիմերը քանդուած են Հայաստանի քանդիչ և աւերիչ ձեռքերէն, որք կարծես միայն քակելու և ոչ երբէք շինելու համար սահմանուած են: Այժմ բոլոր դաշտին մէջ կը մնայ միայն Դըպրոցասիրաց—Արեւելեան կեդրոնական վարժարանը, ուր կը յաճախեն 50—60 Հայ մանկուկք՝ և որոց թիւը հետզհետէ շատնալու է գիւղական աշակերտներով: Լաւ և յարմար կեդրոն մ'ալ կը լինի Վաղարշապետէն 6 ժամ հեռու Դարաքիլիսի հայկական գիւղաքաղաքը, որոյ առևտուրը խիստ բանուկ է և Բաղիշեցի Հայ վաճառականաց ձեռքն, Դարաքիլիսի ամբողջ «նահիէի» կեդրոն է, ունենալով շուրջ 15—20ի Հայի Հայ գիւղեր: Դաշտի սոյն մասին վիճակը մինչև Պայագլու յուսակտուր և խիստ անմխիթարական է, 1,200 տուն Հայ բնակիչք զաղթականութեան և պատերազմի ժամանակ իրենց բոլոր գոյքերէն և ստացուածքներէն յափշտակուելէն յետոյ 4213 մարդազոհ ալ տուած են: Երբ Վաղարշապետի Դպրոցասիրաց—Արեւելեան վարժարանը բանալէս և զգաստուաւ կարգէլէս յետոյ ի Պուլանըն կը դառնային անկից ալ ի Մուշ երթալու համար, Դարաքիլիսիէն ուսման ծարաւ ազգայինք զիս շըբը ջապատելով «մեզ ալ վարժապետ» կ'աղաղաւ կէին: Սոքա այրուած և քանդուած եկեղեցիէն, վարժարանէն և մէկ հացի փուռէն դատ ունին կանգուն 11 խանութ, որք տարեկան 50 ոսկի եկամուտ կրնան տալ, բայց այժմ ժողովրդեան անտանելի վիճակն ստիպած է զիրենք եկեղեցւոյ դրամ 32,000 զըշն աղքատաց բաժնել: Դարաքիլիսի ազգայնոց անցեալ վիճակը կը ցուցնէ, Խմբագիր տէր, նոցա ուսումնասիրութիւնն ու միութիւնն, որ եթէ շարունակուէր՝ մեծ օգուտներ կարտադրէր: Բայց քանիչ ձեռքեր այս վարդն ալ չորացուցած են: Մեզ եկեղեցի հարկ չէ, առաջ դպրոց պիտի շինենք, վարժապետ կուգենք ազգէն և ընկերութեանէ՝ մեր ձիւները (մանկուկք) կ'աղաքանելու համար:» Յուզուեցայ ժողովրդեան այս ցոյցէն, և իւր ժողովրդական մարդ խոստացայ իրենց վարժապետ մը զրկել: Անկարելի է ժողովրդեան խանդը նկարագրել. շինութեան ծրագիր մը ուղեցին և տուի, և նոյն օրը ներկայութեան 20 հազար աղիւս ասպարէցին վարժարանի շինութեան համար: Իրենց խնդրանօք «Նիթերցասիրաց» ընկերութիւն մ'ալ հաստատեցին ուր «Մասիս» լրագիր պիտի բերել տան: Չորս հինգ

ժամ Դարաքիլիսիէ մնալէ և խեղճ Ազգայնոց սիրալիւր ընդունելութիւնը վայելելէ և զանոնք ինչպէս որ հարկն է քաջալերելէ յետոյ, երեկոյեան ժամը 11-ին մեկնեցանք՝ մօտակայ դաշտին մէջ բաց երկնից տակ վտակի մը եզրը կանաչազեղ մարգագետնի վրայ գիշերն անցունելու համար:

(Կը շարունակվի)

## «ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 26 Հոկտեմբերի: Բ. Դուռը պաշտօնապէս հրամայեց յանձնել Դուռնեան վիճակը չէրնօգորցնելին: Կարինտի փոփոխութիւնը կամ Սաիդ-փաշայի հրաժարականը հաւանական է: Ստար պետութիւնների դեսպանները միջոցներ են ընդունում եւրօպացի հպատակներին պաշտպանելու համար: Վախենում են որ յեղափոխութիւն ծագի: Հաւատացնում են, որ անգլիական ագէնտները զրգուում են ամբոխը, փողեր բաժանելով: Ֆրանսիան և Իտալիան զիտաւորութիւն ունեն ուղարկել իրանց նաւատորմը թիւրքաց ծովերը, եթէ աւստրիական նաւերը ուղարկված կը լինեն գէպի Սալոնիկի: Մինիստրների խորհուրդը վճռեց խորհուրդ տալ Սուլթանին անյապաղ իրազեկել Ռէֆորմներ թէ Փոքր-Ասիայում և թէ եւրօպական Թիւրքիայի նահանգներում:

Վ.Ի.Ն.Ս., 26 Հոկտեմբերի: Աւստրիա և Գերմանիա համաձայնելով միմեանց մէջ ըստ սկզբունքի, խորհրդակցում են այժմ Անգլիայի հետ, թէ ինչպէս ներգործեն Թիւրքիայի վրա միահամուռ կերպով: Ֆրանսիան սառնութեամբ է վերաբերվում դէպի այդ դաշնագրութիւնը: Այն լուրը որ Անգլիան պահանջում է իր համար Թիւրքիայից ծովային կայարաններ Սև ծովի վրա, Տրապիզոնի մօտ, հաստատվում է:

ԼՕՆԻՍ, 26 Հոկտեմբերի: «Times» լրագիրը հաղորդում է որ Թիւրքաց դեսպան Լօնդօնում Մուսուրու-փաշան, հաւատացրեց Սալիբուրիին, որ Թիւրքիայի արտաքին քաղաքականութիւնը չի փոխվել, որ Սուլթանը սրտով ցանկանում է խոստացած Ռէֆորմների իրագործելը: Ֆրանսիա կը լինէր Բէկէր-փաշային նշանակել ժամդարմների զիտաւոր Հայաստանում: Սուլթանը յոյս ունի որ անգլիական նաւատորմի տեղափոխվելը աւելորդ կը ճանաչվի: Սալիբուրի պատասխանեց, որ բրիտանական կառավարութիւնը չէ կարող այլ ևս համբերել Ռէֆորմների իրագործման նոր յետաձգութեան այժմեան անհոգ կառավարութեանը նայելով: Սալիբուրի ասեց. «Թիւրքաց կայսրութիւնը պէտք է մասերի բաժանվի և անգլիական կառավարութիւնը գործ է պահանջում և ոչ թէ խօսք: Բայց ի նկատի առնելով Թիւրքաց դեսպանի խոստումները, Անգլիան առ ժամանակ կը սպասի:»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 Հոկտեմբերի: «Правда. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Թագաւոր Կայսրը հրամայել է, թէ բոլոր այն զինեալներին, շտաբ և օբէր օՖիցերներին, որոնք գտնվել են Սեպասուպօլում, 1854 թըւականի Հոկտեմբերի 5-ի առաջին ումբակով ծուլեան ժամանակ, և որոնք այժմ էլ դեռ ծառայութեան մէջ են, աւելորդ ռոճիկ նշանակեն համեմատ այն ռոճիկին և այն աստիճանին, որ նրանք ունեցել են ռմբակոծութեան օրը:

ՍԷՐԱՆՎՈ, 25 Հոկտեմբերի (6 նայեմբերի): Վիրտենբերգեան իշխանը հանդիսաւոր կերպ

պով բացեց ընդարձակ զինանգրա և տղայոց զինուորական պանթօն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 Հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսին առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 25 Կ., չորրորդ 93 ր. 75 Կ., ներքին 5% տոմսին փոխառութեան տոմսին արժէ 230 ր. 50 Կ., երկրորդ 224 ր. 50 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը — 90 ր. 75 Կ., երկրորդ 90 ր. 62½ Կ., ոսկի 7 ր. 81 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,75 պէս. ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 216 մարկ, Փարիզի վրա 268 Ֆրանկ: Տրամադրութիւնն ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 Հոկտեմբերի: «Правда. Вѣстн.» լրագրում տպված են կանոններ թէ ինչպէս պէտք է գործադրվի զենքը պօլիցիական աստիճանաւորների և ժամդարմների ձեռքով, նոյնպէս կանոններ երկաթուղու շղթկաւոր ծառաների համար գնացքի շարժման և հանգստանալու ժամանակ:

Վ.Ի.Ն.Ս., 27 Հոկտեմբերի: «Polit. Corresp.» հաղորդում է, որ Անգլիան պահանջում է Թիւրքիայից նաւահանգիստներ Սիրիական ափերի վրա: Մատնացոյց են անում Սեւ փրիա նաւահանգիստի վրա, որտեղից իւր թէ պէտք է անցնի երկաթուղու գիծը Դամասկոսի և Պարսից ծոցի վրա:

ՓԱՐԻՉ, 27 Հոկտեմբերի: Կրդիները հաղորդում են իւր լուր, որ Սուլթանը, երկու կրեյով ամբոխի զրգուումից Կ. Պոլսում, վախենում է իր գահի և իր կենսքի համար, և այդ պատճառով համաձայնվում է զիջանել Անգլիային Արևա սալած նաւահանգիստը Բաթումից ոչ հեռու:

Կ. ՊՈԼԻՍ, 26 Հոկտեմբերի: Այն զրգուումը որ պատճառել է Կ. Պոլսում Անգլիայի գործունէութեան նոր եղանակը, դեռ չէ հանդարտվել: Կ. Պոլսի մամուլը եռանդոտ կերպով բողբոքում է Անգլիայի պահանջողութիւնների դէմ: Լայարդ դիմեց Բ. Դրանը հետեւեալ պահանջներով. Կիպրոսի մասին կապված դաշնագրութեան վերանորոգման, անգլիացիների նշանակելը հարկահանների պաշտօնի վրա և Ֆինանսների վերատեսուչների պաշտօնի վրա, պահապան գործերի կազմելը անգլիացի օՖիցերներին առաջնորդութեամբ և քաղաքական դատարանների մէջ անգլիացի նախագահների նշանակելը: Աւստրիական և իտալական դեսպանները խորհուրդ են տալիս Թիւրքաց կառավարութեանը զիջում անել անգլիացիների բոլոր պահանջներին: Գերմանական դեսպան կոմս Հայնիշը զպպեց իրան կարծիքը յայտնելու: Ֆրանսիական դեսպան Ֆուրնիէ խորհուրդ է տալիս շտապեցնել Սուլթանին մի որ և է վճռողական դիրք ընդունել՝ կամ զիջանել բոլոր կէտերի մէջ, կամ ոչ մի կէտում ոչ մի զիջում չանել: Այդ մի շատ անախորժ դիրքի մէջ զցեց երկու կողմերն էլ: Թիւրքաց կառավարութիւնը շատ անմխիթար դրութեան մէջ է Ֆինանսների կողմից: Չօքքի հայթայթողները յայտնեցին սերասկերատին, որ պակասեցնելու են 50%-ով Սուլթանի հատույթը, մինչև որ իրանց չը վճարվի հայթայթած պաշարի ամբողջ գինը: Հայցի վաճառողները նոյնպէս հրաժարվեցան իրանց յանձն առած կապալների կատարելուց: Միայն երկու շարաթփայ համար պաշար կայ: «Köln. Zeit.» լրագիրը հաւանական է համարում կոմս Նուվալօվի յետ կանչելը:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ



Типографія А. А. Михельсона